ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Բարսեղ Նիկողոսյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Երվանդ Խաչատրյանի
- Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանի
- Արմավիրի մարզպետի օգնական՝ Նարեկ Խաչատրյանի
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝ Աննա Միքայելյանի
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի

Քննարկվեց՝

ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից գլխավորած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից 07.04.2025թ. տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա այլ հրատապ խնդիրներ:

1. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ

գույքի հանձնման ուղղությամբ տարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը զեկուցեց հետևյալ տեղեկատվությունը՝

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման գործընթացի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնված թվով 7 դպրոցների հանձնման կապակցությամբ կատարվում է ամենօրյա աշխատանք /փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություն դպրոց, քննարկումներ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակիցների հետ/ և արդյունքների մասին կազմվել է տեղեկանք, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

	Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ տարվող աշխատանքները**
1	«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Նախատեսվում է քննարկում Պետական գույքի կառավարման կոմիտեում խնդրի կարգավորման ուղղությամբ:
2	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**
3	«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ 1-ին փ., 26շ.	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Նախատեսվում է քննարկում Պետական գույքի կառավարման կոմիտեում խնդրի կարգավորման ուղղությամբ:

4	«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ խոշորացված համայնք գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Նախատեսվում է քննարկում Պետական գույքի կառավարման կոմիտեում խնդրի կարգավորման ուղղությամբ:
5	«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	Նախատեսվում է քննարկում Պետական գույքի կառավարման կոմիտեում խնդրի կարգավորման ուղղությամբ:
6	Արգինայի միջնակարգ դպրոց	Գ. Արգինա, Աբովյան 40	Բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:	**Պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկվել է մարզպետի համապատասխան գրություն կառավարության որոշման նախագիծ շրջանառելու համար:**
7	Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ Խոյ խոշորացված համայնք Գեղակերտ բնակավայր Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	Միջոցներ են ձեռնարկվում ինքնակամ շինությունների քանդման և հետևանքների վերացման կապակցությամբ:

2. Ժամկետանց սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ Լիլիթ Մուշեղյանը զեկուցեց՝

2025թ. ընթացքում ՀՀ կառավարության 2 որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է 126,845.2 հազար դրամ՝ մարզի 3 համայնքի 4 բնակավայրում իրականացված սուբվենցիայի 4 ծրագրի/5 ենթածրագրի կառավարության մասնաբաժնի համաֆինանսավորման նպատակով:

Արմավիրի, Մեծամորի, Արաքսի համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա 2025թ. ապրիլի 14-ի դրությամբ կատարվել է պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ 126,845,185 ՀՀ դրամ, կատարողականը կազմում է 100%:

Ծրագրերը ֆինանսավորվում են համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց ուսումնասիրության, ինչպես նաև համապատասխան աշխատակիցների կողմից կատարված աշխատանքների, կատարողականների համապատասխանելիության և կատարված աշխատանքների որակի մասով տեղերում իրականացված մշտադիտարկման արդյունքում:

2025թ. ապրիլի 14-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 12 ծրագրի/16 ենթածրագրի համար վճարման փաթեթ՝ կառավարության

մասնաբաժնի հատկացման համար՝ շուրջ 442.1 մլն դրամ ընդհանուր գումարով, գումարները կհատկացվեն կառավարության առաջիկա նիստերի ընթացքում:

Ամփոփվել և ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մ.Մելիքյանին և Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պատասխանատուներին է տրամադրվել 2025 թվականին ընթացքի մեջ և ավարտական փուլում գտնվող սուբվենցիոն ծրագրերի ցանկը՝ պայմանագրերի գործողության ժամկետների երկարացման ուղղությամբ համայնքապետարանների պատասխանատուների հետ հետևողական աշխատանք տանելու համար:

ՀՀ Արմավիրի մարզպետի 20.01.2025թ. N 01/16/00351-2025 շրջաբերական գրությամբ համայնքապետարաններին տրամադրվել է ՀՀ Կառավարության 27.12.2025թ. N 2085-Ա որոշումը, որով թույլատրվում է 2022-2024թթ. հավանության արժանացած, սակայն աշխատանքները չավարտված սուբվենցիայի ծրագրերի իրականացման համար համայնքների հետ կնքված սուբվենցիայի տրամադրման մասին պայմանագրերում և համապատասխան շինարարական աշխատանքների, դրանց կատարման նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների գնման պայմանագրերում կատարել փոփոխություններ՝ պայմանագրերի գործողության ժամկետ սահմանելով մինչև 2025 թվականի նոյեմբերի 15-ը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները: Գրությամբ առաջարկվել է կնքված համաձայնագրերը պարբերաբար ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ՝ կնքվելուց հետո 3-օրյա ժամկետում:

3. Արմավիրի մարզի, Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի 1 և 3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող բնակիչներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը զեկուցեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 20.03.2025 N340-ն որոշման և ի կատարումն դրա պահանջների ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Լենուղի բնակավայրի N1 և N3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում բնակվող բնակիչների բնակարանային պայմանների բարելավման նպատակով, ֆինանսական աջակցության տրամադրման համար մարզպետի աշխատակազմում համդիպում է տեղի ունեցել նշված ծրագրի շահառու հանդիսացող բնակիչների հետ և սահմանված կարգի համաձայն նրանց ծանուցագրեր են հանձնվել բնակարանի գնաման վկայագրի միջոցով աջակցություն ստանալու և սահմանված ժամկետում ցանկություն հայտնած անձանց կողմից մարզպետին դիմում ներկայացնելու մասին: Հանդիպման ընթացքում շահառուներին պարզաբանվել են համապատասխան ֆինանսական աջակցություն տրամադրման հետ կապված կարգավորումներին վերաբերող առանձնահատկություններ: Սահմանված կարգի համաձայն մարզպետի աշխատակազմը՝ դիմումները ստանալուց հետո, ոչ ուշ քան 10-օրյա ժամկետում նրանց կծանուցի՝ առաջարկելով մարզպետի հետ կնքել պայմանագիր՝ վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակարան կառուցելու համար ֆինանսական աջակցություն ստանալու մասին:

4. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2025թ. հունվար ամսվա՝ աշխատողների աշխատանքի հաճախելու հաշվառման մատյանի կորստի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով ծառայողական քննության ընթացքի վերաբերյալ Արամ Հովհաննիսյանը զեկուցեց՝

Մարզպետի աշխատակազմի ս/թ հունվար ամսվա աշխատակիցների աշխատանքի հաճախելու հաշվառման մատյանի կորստի փաստով նշանակված ծառայողական քննությունը գտնվում է նյութերի նախապատրաստման փուլում: Ծառայողական քննություն վարողի կողմից ներկայացվել են համապատասխան նյութերը և զեկուցվել է քննության ընթացքի մասին: Ըստ այդմ, քննությանն առնչվող անձանցից վերցվել են բացատրություններ, կատարվում են քննությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրության, պարզված հանգամանքների ստուգման, համադրման աշխատանքները և հավաքված հավաստի տվյալների բավարար ամբողջության արդյունքում քննությունը պետք է ավարտվի ապրիլի 15-ին:

5. Բժշկական կենտրոնները նախարարությանը հանձնելու փաթեթների ընթացքի և Էջմիածնի ԲԿ ՓԲԸ–ում առկա խնդիրների վերաբերյալ Ասթինե Ապիտոնյանը զեկուցեց՝

«Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ և «Մեծամորի» ԲԿ ՓԲԸ–ների կանոնադրությունները ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում արդեն գրանցվել են:

Էջմիածնի ԲԿ ՓԲԸ–ի կանոնադրական կապիտալում փոփոխություն կատարելու խնդրի հետ կապված գրություն է ներկայացվել Առողջապահության նախարարություն՝ իրականացված աշխատանքների և խնդիրների վերաբերյալ:

6. Մարզում իրականացվող պետական աջակցման ինչպիսի ծրագրեր կան, որ ոլորտներն են ընդգրկում/ այդ թվում ԼՂ տեղահանվածներին վերաբերելի/ դրանց ընթացքի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մանվել Մելիքյանը զեկուցեց՝

2025 թվականի ընթացքում սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրեր

1. Ադրբեջանի կողմից 2016, 2020 և 2023 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում և զբաղվածության ապահովում Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

- իրականացնել մասնագիտական ուսուցում
- առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող շահառուի համար իր մոտ կազմակերպել մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթաց կամ
- տրամադրել իրեն միանվագ փոխհատուցում՝ շահառուի հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար

2. 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության ծրագիր

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

- մասնագիտական ուսուցում և աշխատանքի տեղավորում,
- աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում,
- մասնագիտական ուսուցում, աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում:

3.Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպման համար պետական աջակցության տրամադրման միջոցառում

Ծրագրի նպատակն է

- աջակցություն տրամադրել անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքը արդյունավետ կազմակերպելու հարցում:

2025 թվականի ընթացքում խնամատարության զարգացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում մարզում նախատեսվում է իրազեկման աշխատանքներ համայնքային հանդիպումների միջոցով:
2025 թվականին նախատեսվում է ազգային փոքրամասնություն կազմող համայնքների 7-13 տարեկան դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարներում:

Առողջապահության ոլորտում

1. 2025 թվականի սեպտեմբեր ամսին ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքում ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ նախատեսվում է իրականացնել առողջ ապրելակերպի արշավ, որին մասնակցելու են մարզի դպրոցականները: Արշավի ընթացքում նախատեսվում է ստեղծել մի քանի տաղավարներ, որտեղ կիրականացվեն արյան զարկերակային ճնշման չափումներ, աչքի տեսողության ստուգումներ, մարդու մարմնի զանգվածի ինդեքսի որոշում և այլն: Արշավին մասնակցում են նաև ՔՈԱՖ կենտրոնը, պարենի համաշխարհային կազմակերպությունը, ինչպես նաև մարզի մի շարք կազմակերպություններ: Արշավի ընթացքում երեխաները և իրենց ծնողները անմիջական մասնակցություն կունենան առողջ սննդի պատրաստմանը և հիգիենայի կանոնների մշակմանը: Ծրագիրն արդեն երեք տարի է ինչ իրականացվում է մարզում և կրելու է շարունակական բնույթ:
2.2025 թվականի ապրիլի 1-ից ՀՀ առողջապահության նախարարության կողմից մարզի բժիշկների համար մեկնարկել է Թվային փոխակերպումները առողջապահության մեջ. Առողջապահական ճշգրիտ տվյալներ եռօրյա դասընթացը, որին մասնակցում են մարզի բոլոր առողջապահականան կազմակերպություններից բժիշկներ:
3.ՀՀ ԱՆ Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի հետ համատեղ նախատեսվում է վերապատրաստումներ մարզի բժշկական կազմակերպությունների ծննդօգնության ծառայություն իրականացնող հաստատությունների մանկաբարձ–գինեկոլոգների, նեոնատոլոգների, անեսթեզիոլոգների համար՝ ինտենսիվ ծննդաբերական բլոկ թեմայով, ինչի արդյունքում կբարելավվի ծառայությունների որակը:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրեր.

ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատվել է բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագիրը:
Ծրագրով նախատեսվում է փոխհատուցել հացահատիկային, հատիկաընդեղեն, կերային մշակաբույսերի մեկ հեկտարի հաշվով կատարվող հիմնական աշխատանքների (վար, ցանք, սերմ, բերքահավաք) ծախսերի 50 տոկոսը: Ծրագիրը և շահառուի կողմից ներկայացվող դիմումի օրինակելի նմուշը ներկայացվել է համայնքներին: Կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և մոնիթորինգի կարգը մշակելու է էկոնոմիկայի նախարարությունը, որը մինչև ապրիլի 20-ը պետք է ներկայացնի համայնքներին և մարզպետի աշխատակազմ:

Կրթական ծրագրեր

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների մինչև 100 սովորող ունեցող հաստատությունների՝ միջոցառման շահառուներ/125 շահառու տարվա կտրվածքով/:
2. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկական առարկաների) դասավանդող, հավելավճար ստացող ուսուցիչներ /812 շահառու տարվա կտրվածքով /:
3. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 111 ուսումնական հաստատություններից 86-ը տրամադրում են տաք սնունդ, իսկ 25-ը՝ չոր սնունդ: «Կայուն դպրցական սնունդ» ծրագրից օգտվում են տարրական դասարանների շուրջ 14920 աշակերտներ, նախակրթարանների՝ 1025 սաներ:
4. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում ԼՂ-ից բռնի տեղահանված և ԿԳՄՍ նախարարության կողմից գործողված 57 ուսուցիչ է աշխատում:
5. 654 (317-ը նախորդ տարիներին, 337-ը այս տարի) ուսուցիչներ անցել են կամավոր ատեստավորումը, և ընդգրկվել են հավելավճարների տրամադրման ծրագրում:
6. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների 42 ուսուցիչներ ունեն տարակարգ:
7. «Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակներում մարզի 12 երաժշտական և արվեստի դպրոցների 82 աշակերտների ՀՀ պետական բյուջեով հատկացվել է փոխհատուցում 17.866.500 ՀՀ դրամ:
8. Մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային և մարզային փուլերը 2 տարիքային խմբերով՝ 5-8-րդ և 9-12-րդ դասարանցիների: Ապրիլի 26-27-ին մարզային փուլում 2 տարիքային խմբերի հաղթող թիմերը կմասնակցեն Չարենցավանում անցկացվող հանրապետական եզրափակիչ փուլին:
9. Փետրվար-ապրիլ ամիսներին կազմակերպվել է հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային փուլը, մարզային փուլը տեղի կունենա ապրիլի 17-18-ին:
10. Մայիսի 2-ին տեղի կունենա «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլը:
11. Մայիսի 3-ից 13-ը կկազմակերպվի «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի համայնքային փուլերը, իսկ Արմավիրի մարզային փուլը նախատեսվում է անցկացնել մայիսի 22-ին:
12. Մարտ-Նոյեմբեր ամիսներին մարզի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ ընթանում է «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա» մարզական միջոցառման դպրոցական, համայնքային և մարզային փուլերը՝ 8 մարզաձևերից, հրաձգություն մարզաձևից մարզի թիմը հանրապետական եզրափակիչում գրավել է 2-րդ տեղը:

Քաղաքաշինության և հողաշինության ոլորտում իրականացվող ծրագրեր՝

Արմավիրի մարզին վերաբերող ընթացքի մեջ գտնվող պետական ծրագրերի մասին, ըստ ոլորտների

1 Մանկապարտեզների կառուցում՝

1.Խոյ համայնքի Ծաղկունք բնակավայրի մանկապարտեզի կառուցում/ՀՏՋՀ/
2. Արաքս խոշորացված համայնքի Ակնաշեն բնակավայրի մանկապարտեզ /ՀՏՋՀ/
3. Նորավան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ/Քաղաքաշինության կոմիտե/

4. Գետաշեն համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ/Քաղաքաշինության կոմիտե/

5. Լենուղի համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ/Քաղաքաշինության կոմիտե/

2 Դպրոցների կառուցում՝

1. Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոց/ՀՏՀՀ/
2. «Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց» ՊՈԱԿ/ՀՏՀՀ/
3. Երասխահուն գյուղի կրթահամալիր/ՀՏՀՀ/
4. Նոր Արտագերսի գյուղի կրթահամալիր/ՀՏՀՀ/
5. Գեղակերտի միջնակարգ դպրոց/ՀՏՀՀ/
6. Ամբերդի Հ. Նավասարդյանի անվ. միջնակարգ դպրոց/ՀՏՀՀ/
7. Վանանդի միջնակարգ դպրոց/ՀՏՀՀ/
8. Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց/ՀՏՀՀ/
9. Վաղարշապատի Վ. Ռշտունու անվ. թիվ 11 հիմնական դպրոց/ՀՏՀՀ/
10. Հայկավան գյուղի կրթահամալիր/ՀՏՀՀ/

3 Ճանապարհաշինություն՝

1. Տ-3-14 /Մ-5/ - Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր (Տ-3-16)
2. Տ-3-41 /Մ-3/ (Լուսագյուղ) – Ջրառատ

4 Մարզադպրոցի կառուցում

1. Փարաքարի մարզադպրոց/ՀՏՀՀ/

7. Մարզպետի կողմից այցելություններ իրականացրած դպրոցներից որը ինչ ծրագրի մեջ է ընդգրկված/ եթե այդպիսիք կան/ հարցի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվեց ստորև ներկայացված աղյուսակի տեսքով.

N	Համայնք / բնակավայր	Դպրոցի անվանումը	Այցի ամսաթիվ	Այցի նպատակը	Արձանագրված թերությունները	Թերությունների շտկման վերաբերյալ տեղեկություն	Առկա խնդիրներ, բնակիչների կողմից բարձրացված հարցեր	Այլ տեղեկություններ
	Փարաքար/ Փարաքար	Փարաքարի միջնակարգ դպրոց	17.01.2025	Դպրոցի բացում			1.դպրոցը չունի ոռոգման ցանց, 2.անհատույց օգտագործման իրավունքով տրված տրանսպորտային միջոցն անսարք է և ենթակա է վերադարձման	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ ավարտված

	Արմավիր / Խանջյան	Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց	21.01.2025թ.	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին			1. դպրոցն ունի ջեռուցման համակարգի խնդիր	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
	Արաքս/ Ջրառատ	Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց	07.02.2025	Հին դպրոցի շենքային պայմանների ծանոթացում, նոր դպրոցի կառուցման աշխատանքների ընթացքի հետևում				Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ շինարարական աշխատանքներ են ընթանում, կատարված են աշխատանքների 15 %-ը
	Արմավիր / Արմավիր	Վարդան Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց	19.02.2025	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին	Դպրոցի մաքրությունը և կարգապահությունը բավարար վիճակում էր	Հանձնարարվել է շտկել արձանագրված թերությունները,ինչպես նաև ուշադրություն դարձնել դասաժամերի ընթացքում աշակերտների անհարկի տեղաշարժերին,կարգապահությանը	Դպրոցն ունի վերանորոգման կարիք, անբավարար վիճակում են սանհանգույցները	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

	Բաղրամյան/ Բագարան	Բագարանի միջնակարգ դպրոց	12.03.2025	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին			1.ջեռուցման ապահովում, 2.լաբորատորիաների ստեղծում, 3.մարզադահլիճի վերանորոգում	
	Բաղրամյան/ Երվանդաշատ	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	12.03.2025	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին			1.արևային կայանների տեղադրման առաջարկ	
	Փարաքար/ Արևաշատ	Արևաշատի միջնակարգ դպրոց	14.03.2025	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին			1.սանհանգույցների վերանորոգման կարիք կա, 2.հարմարեցված շենքի փոխարեն՝ նոր դպրոցի կառուցման անհրաժեշտություն	
	Խոյ/ Աղավնատուն	Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց	17.03.2025	«Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի բացում				

	Արաքս/ Մեծամոր	Մեծամորի միջնակարգ դպրոց	17.03.2025	«Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի բացում			Դպրոցին անհրաժեշտ է նոր մասնաշենք, քանի որ այն չի համապատասխանում ՀՀ քաղաքաշինության նորմերին: Չկա ապաստարան, սպորտդահլիճ , հանդերձարաններ, ճաշարան, բուֆետ, ռազմագիտության դասասենյակ, քիմական նյութերի պահեստարան, գույքի պահեստարան, առաջին բուժօգնության սենյակ, առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված հատուկ դասասենյակ, գրադարանները փոքր են: Սանհանգույցները չեն համապատասխանում սահմանված նորմերին: Առաջին բուժօգնության սենյակ, առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված հատուկ դասասենյակ, գրադարանը փոքր է:	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
	Վաղարշապատ/ Էջմիածին	Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց	07.03.2025թ.				1.հիմնանորոգման կարիք կա 2.որոշ մասնագետների կարիք /ֆիզկուլտուրա, քիմիա/	

	Արաքս/ Առատաշեն	Առատաշենի միջնակարգ դպրոց	04.04.2025թ.	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին			Գտնվում է անմխիթար վիճակում/դասասենյակները,միջանցքները,մարզադահլիճը կարիք ունեն հիմնորոգման	
	Արաքս/ Խորոնք	Խորոնքի միջնակարգ դպրոց	04.04.2025թ.	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքին			Դպրոցը չունի հանդիսությունների սրահ և մարզադահլիճ, 2-րդ հարկը ունի կոսմետիկ վերանորոգման և հատակի փոխման կարիք	Կառուցվել է1959 թվականին, պայմանները նորմալ են, կա մարզադահլիճի խնդիր:
	Ֆերիկ/Ֆերիկ	Ֆերիկի միջնակարգ դպրոց	04.04.2025թ.	Ծանոթացում շենքային պայմաններին, առկա խնդիրներին			Դպրոցը չունի հանդիսությունների սրահ և մարզադահլիճ, չունի լաբորատորիաներ,ունի լրացուցիչ դասասենյակների և համակարգիչների կարիք	Կառուցվել է1965 թվականին, վերանորոգվել է 2014թ.
	Խոյ/Ամբերդ	Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց	11.04.2025թ	Հին դպրոցի շենքային պայմանների ծանոթացում, նոր դպրոցի կառուցման աշխատանքների ընթացքի հետևում				Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

8. Արտադպրոցական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորման վերաբերյալ Մանվել Մելիքյանը զեկուցեց՝

Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից կազմակերպվել է հանդիպում–քննարկում մարզի համայնքապետարանների Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի ղեկավարների և հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ, որով ազդարարվել է արտադպրոցական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորման վերաբերյալ իրազեկման արշավի սկիզբ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել շարունակական հանդիպումներ հասկանալու ընթացիկ խնդիրները և փորձել գտնել դրանց հնարավոր լուծումները:

9. Մայիսի 3-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ Գևորգ Գևորգյանը զեկուցեց՝

Մայիսի 3-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ շրջաբերականներ են ուղարկվել մարզի համայնքներ, նախատեսված սխեմաները լրացվել և ուղարկվել են ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարություն: Աշխատանքները շարունակական են և ընթացքի մասին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

10. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը զեկուցեց՝

Անցած շաբաթվա ընթացքում՝ ապրիլի 9-ին, գրանցվել է կարկտահարություն Մեծամոր և Խոյ համայնքներում, իսկ ապրիլի 13-ի լուսադեմին՝ գետնի մակերեսին կարճ ժամանակահատվածում գրանցվել է -1℃ բացասական ջերմաստիճան, որոնք սակայն էական վնաս չեն պատճառել մարզի գյուղատնտեսական արտադրությանը:

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-04-21 16:23:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան